Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8-315

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

281.6
Ա-15

1903

381.6
Ս-15
04 NOV 2009

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1903

25 JUL 2013
(25244-Կ.Հ.)
8 313
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մասնիկյանի անվան
4396-56

ԿՆԻՔ
ՀԱՅՐԱՊ·

Մ ԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ·

Գերաշնորհ Տ· Յովսէփ Ս· Եպիսկոպոսի, Թեմական Առաջնորդի Վիճակին Հայոց Ամերիկայի, հարազատ որդւոյն Մայր Աթոռոյ եւ Հոգեւոր որդւոյ մերում՝ նուիրեմք ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական։

Ընկալեալ զՅայտարարութիւն Գերաշնորհութեան Ձերոյ ուղեալ յ՚8/21 Յուլիսի տարւոյս, համար 151, հաւատի եղաք ըզկազմութենէ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ որ վասն կառավարութեան Հոգեւոր գործոց վիճակիդ, եւ զնոյն իսկ զկազմեալ Սահմանադրութիւնն ընթեռնլով՝ գտաք վասն առժամանակեայ գործադրութեանն բաւարար եւ յարմարաւոր։ Այդ, հաստատելով մեր Կոնդակաւս այսու զնոր Սահմանադրութիւնն՝ որ վասն Հոգեւոր կառավարութեան նորահաստատ Թեմին Հայոց Ամերիկայի, արտօնեմք վարել ըստ այնմ, եւ հետզհետէ՝ յընթացս ժամանակի՝ ըստ նորանոր փորձոց եւ հանգամանաց՝ յաւելուլ եւ կամ յապաւել առ ի տալ կանոնաւոր ընթացս եկեղեցական գործոց, ժողովոց եւ այլ վարչական պաշտօնէութեանց նոցին՝ ի բարեզարդութիւն եւ ի յարատեւ պահպանութիւն Եկեղեցւոյդ այդորիկ, եւ ի շինութիւն եւ յանդորրութիւն հաւատացեալ ժողովրդեանն Աստուծոյ։ Այլ քան զամենայն մեք աղօթեմք հանապազ՝ զի հզօր Աստուածն Գրիգորի, Ներսիսի եւ Սահակայ, այց առնելով տա-

ռապեալ Հայրենեաց մերոց՝ որպէս ի հնումն Հրէաստանի, դարձ արասցէ նորոյդ Իսրայելի հարազատ զաւակացդ Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ի ծոց Հայրենեաց, որպէս Իսրայելին յաւիտանց գերեալն Բաբելոնի, ուրանօր կամէին զկտակարանս իւրեանց յուռենեաց, եւ չկամէին երգել զօրհնութիւնն Տեառն յօտար երկրի։ Այս են աղօթք իմ եւ խնդրուածք յամենայն ժամ ի Տեառնէ վասն տարագիր հօտին իմոյ ուր ուրեք եւ իցեն՝ հեռի ի Հայրենեաց. եւ յուսամ՝ զի ըստ Դաւթի՝ ըստ ինձ Տէր եւ կատարէ զխնդրուածս իմ։

Վասն Ձեր եւ սիրելի հօտին Ձերոյ հարազատից իմոց հանապազ Աղօթարար՝

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թիւ 1226
Ի 6 Սեպտեմբերի 1902 ամի
Ըստ տոմարիս ՌՅԾԲ
Ի Հայրապետութեան մերում Թ. ամի
Ի ՏՓԽԻՍ

ԿՆԻՔ
ՀԱՅՐԱՊ.

ՀԱՍՏԱՏԵՄՔ
ԶՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

եւ տամք ի գործադրութիւն Հայ Ժողովրդեան Ամերիկայի
ի 6 Սեպտեմբերի 1902 ամի։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդուած 1. — Ամերիկայի մէջ գտնուող Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ որդւոց Ընդհանուր Հոգեւոր Հովուութեան պաշտօնը վերածուած լինելով Առաջնորդութեան ըստ օրհնաձիր Կոնդակի Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Մկրտիչ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի յ2 Յուլիսի 1898 ամի, պիտի ունենայ այսուհետեւ մի եպիսկոպոս Առաջնորդ Հայոց Ամերիկայի տիրոջով, որ լինելով ընդ անմիջական իրաւասութեամբ Ամենայն Հայոց Հայրապետին, իր տեսչութեան ենթարկուած պիտի լինի Ամերիկայի մէջ հաստատուած Եկեղեցիք՝ Եկեղեցական հոգեւոր և աշխարհական պաշտօնեայք և Եկեղեցական սեփականութիւնք։

Յօդուած 2. — Ամերիկայի Հայ. Եկեղեցւոյ կրօնական, կրթական, վարչական և տնտեսական գործերը կը տնօրինուին՝ գիտութեամբ և հաւանութեամբ Առաջնորդին և գործակցութեամբ հետեւեալ պաշտօնէութեանց, որք են՝ Հոգեւոր Հովիւք, Երեսփոխանական Ժողով, Կեդրոնական Վարչութիւն, Թեմական Ժողովք, Հոգաբարձութիւնք և Գործակալք, որոց իրաքանչիւրի ընտրութեանց, պաշտօնի և պարտաւորութեանց մասին պիտի խօսուի առանձին։

Յօդուած 3. — Ամերիկայի առաջնորդութեան իրաւասութեան տակ գտնուած այն տեղերը, որք իրենց մերձաւոր հայաշատ կեդրոն քաղաքի մը մէջ աղօթատեղի մը ունին՝ և կրնան մնայուն հովիւ մը պահել, կը կոչուին Հովուական թեմ։ Իսկ այն տեղերը՝ որք կամ հեռու են այդպիսի կեդրոններէ, և կամ աղօթատեղի և հովիւ մը պահելու դիւրութիւն չունին, կը նկատուին Առաջնորդական թեմ, որոց հոգևոր պէտքերը կը մատակարարուին ուղղակի Առաջնորդարանի կողմէն։

Յօդուած 4. — Հովուական թեմերու մէջ գտնուած եկեղեցւոյ զաւակաց անունները կ՚արձանագրուին հովուական կեդրոնի անձնահամարի Տոմարին մէջ. իսկ Առաջնորդական թեմ նկատուած վայրերունը՝ Առաջնորդարանի Տոմարին մէջ, և այս անձնահամարները, ամէն երկու տարին անգամ մը կը ճշդուին Հոգաբարձութեանց հոգատարութեամբ։

Յօդուած 5. — Իւրաքանչիւր Հովուական թեմ՝ իր գործերուն կառավարութեան համար պէտք է ունենայ իր առանձին Կանոնագիրը ըստ պահանջման տեղական հանգամանաց, զոր՝ կը պատրաստեն Հովիւը և Թեմական ժողովը, և կամ իրենցմէ ընտրուած Յանձնախումբ մը՝ հիմնուած ներկայ Սահմանադրութեանս ուղղութեան վրայ, և որ՝ գործադրութեան դրուելէ առաջ կը վաւերացուի թեմին ժողովուրդէն և կը հաստատուի Առաջնորդէն։ Իսկ Առաջնորդական թեմ նկատուած տեղերու համար առանձին Կանոնագիր մը կը պատրաստուի Կեդրոնական Վարչ. Տնտեսական ժողովէն։

ԳԼՈՒԽ Բ

ԱՌԱՋՆՈՐԴ

Յօդուած 6. — Ամերիկայի Հայոց Առաջնորդը իրեն յանձնուած հօտին յարաբերութեան միջնորդը և միանգամայն պատասխանատու մարմինն է՝ առաջի Ազգային Հոգևոր բարձրագոյն իշխանութեան, որ է Էջմիածնի Մայր Աթոռոյ Ամենայն Հայոց Հայրապետը։

Յօդուած 7. — Ամերիկայի Առաջնորդական Աթոռը երբ թափուր մնայ՝ և է պատճառաւ, Կեդրոնական Վարչութենէն ընտրուած Առաջնորդական Տեղապահը կը վարէ Առաջնորդութեան գործերը մինչև նոր Առաջնորդին իր պաշտօնի գլուխ անցնիլը։

Յօդուած 8. — Տեղապահը պարտի՝ գիտութեամբ և գործակցութեամբ Կեդր. Վարչութեան՝ ընտրել տալ Երեսփոխանները, և առ առաւելն մէկ տարիէն գումարել Երեսփոխանական ժողովը և կատարել տալ Առաջնորդի ընտրութիւնը։

Յօդուած 9. — Կեդր. Վարչութիւնը եթէ ունենայ այնպիսի յարմար ընտրելիներ, որոնց հաւանութիւնը առնուած լինի կանխաւ, և Երեսփոխանութիւնը անոնց մասին առարկութիւն մը չունենայ, անոնց վրայ կը կատարուի քուէարկութիւնը, և ընտրեալ Առաջնորդին անունը կը տեղեկագրուի Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին ի հաստատութիւն. իսկ եթէ չունի՝ Երեսփոխանութիւնը կը խնդրէ Նորին Ս. Օծութենէն, որ կամ ընտրելեաց ցանկ մը ղրկէ՝ անոցմէ մին ընտրելու համար, և կամ նշանակէ յարմար մէկը Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան պաշտօնին։

Յօդուած 10. — Ամերիկայի Հայոց Առաջնորդին առաջնորդանիստ կեդրոնը պիտի լինի առ այժմ Մասաչուսէց Նահանգի Ուսսըր քաղաքը, որ թէ Ամերիկայի բազմահայ վայրաց կեդրոնն է, և թէ ունի սեփհական ազգային Եկեղեցի և Առաջնորդարան։

Յօդուած 11. — Առաջնորդին պարտականութիւններն են,

Ա. Հաւատարիմ մնալ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութեան, աւանդութեանց, կարգաց և կանոնաց։

Բ. Հնազանդ լինել Ամենայն Հայոց Հայրապետի հրամանաց։

Գ. Հսկել Սահմանադրութեան սնթերի գործադրութեան։

Դ. Կատարել տեղական և արտասահմանի թղթակցութիւնները։

Ե. Պահել Ամերիկայի մէջ գտնուած բոլոր Հայ. Եկեղեցւոյ զաւակաց անձնահամարի վիճակագրութիւնը՝ և մկրտելոց, ամուսնացելոց և ննջեցելոց մանրամասն արձանագրութիւնը առանձին տոմարաւ. Եկեղեցեաց և Առաջնորդարանի տարեկան եկեմտից հաշիւները, և Կեդրոնական Վարչութեան ժողովոց՝ ինչպէս նաև Երեսփոխանական գումարմանց՝ արձանագրութիւնները։

Զ. Հոգ տանել եկեղեցական սեփականութեանց ապահովութեան և բարւոք պահպանութեան։

Է. Տնօրինել այն ամէն խնդիրները՝ որք կը յանձնարարուին եկեղեցական պաշտօնական մարմնոց կողմանէ կամ անհատներէ, և որք կը վերաբերին Առաջնորդի իրաւասութեան։

Ը. Գոնէ տարին մի անգամ՝ այցելելով թեմերը՝ անձամբ տես-

զեկանալ ժողովրդեան հոգևոր կացութիւնը և պէտքերը՝ և ձեռնհաս ժողովոց միջոցաւ անօրինել կարևորը և կարելին։

Թ. Տարին մի անգամ Առաջնորդարանի գործոց՝ և ժողովրդեան ընդհանուր կացութեանը մասին՝ մանրամասն տեղեկագիր մը պատրաստելով՝ զրկել Ամենայն Հայոց Հայրապետին, մի օրինակն ալ յանձնել Կեդր. Վարչութեան ի նկատողութիւն և յարձանագրութիւն։ Կեդր. Վարչութիւնը անոր պատճէնը իւր դիտողութեամբ հանդերձ (եթէ ունի), կը զրկէ Ամենայն Հայոց Հայրապետին։

Յօդուած 12. — Առաջնորդն է՝ գործադիր պաշտօնեայն և նախագահն Կեդր. Վարչութեան ժողովոց և Երեսփոխանութեան. նաև վերին հսկողը Հովուական թեմերու բոլոր գործոց. բայց իրաւունք չունի ո՛և է պաշտօնեայ մը կամ պաշտօնէութիւն մը լուծեալ կամ դադարեալ հռչակելու, այլ անոնց նկատմամբ իւր ունեցած դիտողութիւնը կամ բողոքը գրաւոր կերպով կրնայ ներկայացուցանել ձեռնհաս ժողովներու, կամ Ամենայն Հայոց Հայրապետին։ Մինչև թէ՝ երբ ո՛և է հոգևորական կամ աշխարհական պաշտօնեայ կամ պաշտօնէութիւն գայթակղական կամ խռովայոյզ ընթացք մը ունենայ, Առաջնորդը իրաւունք ունի անմիջապէս առժամանակեայ կերպով դադրեցուցանել զայն իւր պաշտօնէն՝ վերջնական որոշումը թողլով պատկանեալ ձեռնհաս ժողովոց կամ Ամենայն Հայոց Հայրապետին։

Յօդուած 13. — Առաջնորդի անձին կամ պաշտօնավարութեան դէմ եղած գանգատները՝ պէտք է գրաւոր լինին և զրկուին Կեդր. Վարչութեան Դիւանը, որ եթէ նկատողութեան արժանի դատէ՝ ժողով գումարելով՝ կը քննէ խնդիրը, և եթէ չկարենայ կարգադրել՝ Երեսփոխանական Ժողովի անօրէնութեան կը յանձնէ խնդիրը՝ իւր տեղեկագրովը։

ԳԼՈՒԽ Գ.

ԹԵՄԱԿԱԼ ՀՈՎԻՒՆԵՐ

Յօդուած 14. — Թեմական հովիւները իրենց թեմի եկեղեցական ժողովոց և եկեղեցական կազմակերպութեանց Նախագահը և անոնց որոշմանց գործադիր պաշտօնեաներն են։ Իրենց դիտողութեամբ և նախաձեռնութեամբ կ՚ընտրուին Եկեղեցւոյ Վարչական

գործոց համար կազմուելիք մարմինները. իրենք են որ կը հրահանգեն և կը թելադրեն անոնց ինչ որ պէտք է իրենց թեմի ժողովրդեան հոգևոր վիճակի բարելաւութեան համար։

Յօդուած 15. — Թեմական հովուաց պարտաւորութիւններն են,

Ա. Քարոզել և ուսուցանել՝ բանիւ և գրով՝ քրիստոնէական հաւատոյ և բարոյականի ուսումը։

Բ. Մատակարարել Եկեղեցւոյ Ս. Խորհուրդները իրենց խնամոյ յանձնուած հօտին։

Գ. Հայթայթել միջոցներ մայրենի լեզուի, եկեղեցական և ազգային պատմութեանց ուսուցման։

Դ. Յաճախակի այցելութեամբ մխիթարել հիւանդները, աղքատները, սգաւորները, և տալ՝ որոց պէտք են՝ յորդոր, խրատ և քաջալերութիւն։

Ե. Խրախուսել իրենց թեմերու մէջ գտնուած բարենպատակ ընկերութիւնները, մանաւանդ զանոնք՝ որոնց կանոնագրերը վաւերացուած կը լինին Առաջնորդարանէն, կամ իրենց գտնուած թեմի հովուութենէն և պարբերաբար համարատու կը լինին յիշեալ պաշտօնէութեանց։

Զ. Ունենալ իրենց թեմերու Եկեղեցւոյ զուտակաց անձնահամարի արձանագրութիւնը և անոնց տարեկան եկեղեցական ցուցակը։

Է. Ունենալ առանձին վիճակագիր՝ մկրտելոց, պսակելոց և ննջեցելոց, և ամեն երեք ամիս՝ զրկել զայնս Առաջնորդարան։

Ը. Հսկել ճշգիւ գործադրութեան Թեմական Կանոնագրին, զանձային հաշուոց կանոնաւորութեան և ժողովներու որոշմանց կանոնաւոր արձանագրութեանց, զորս պարտին վաւերացուցանել, ի բաց առեալ այն պարագայէն՝ երբ տրուած որոշում մը օրինաց հակառակ կը նկատեն, այն ատեն իրենք ձեռնպահ կը մնան և կը տեղեկագրեն Առաջնորդին։

Թ. Իրենց թեմին վերաբերեալ շրջակայ տեղերու ժողովրդեան այցելել պարբերաբար՝ ըստ Թեմական Կանոնագրին, և չթողուլ զայնս առանց հոգևոր մխիթարութեան։

Ժ. Ջանալ հաշտարարութեամբ կարգադրել անոնց մէջ ծագած վէճերը։

Յօդուած 16. — Թեմական հովիւները՝ իրենց ձեռնհասութենէն վեր նկատած խնդրոց համար պարտին դիմել Առաջնորդին, ինչպէս որ Առաջնորդն ալ՝ այդպիսի հանգամանաց մէջ կը դիմէ Ամենայն Հայոց Հայրապետին։

Յօդուած 17. — Ըստ Հայ. Եկեղեցւոյ կանոնաց, թեմի մը

հովիւը կամ ՝ և է հոգևոր պաշտօնեայ, պէտք չէ ուրիշ թեմի մը մէջ հոգևոր պաշտօն կատարէ, առանց նոյն թեմի հովուի և Հոգաբարձութեան հաճութեան կամ Առաջնորդի գիտութեան։

Յօդուած 18. — Թեմական հովիւները իրենց բոլոր հոգևոր գործերուն համար պատասխանատու են Առաջնորդին, և պարտաւոր են տարին մի անգամ իրենց գործառնութեանց տեղեկագիրը ղրկել Առաջնորդին, մէկ օրինակն ալ յանձնելով Թեմական Ժողովին, Թեմական Ժողովն ալ կը ղրկէ զայն Առաջնորդին իրեն դիտողութիւններովը (եթէ ունի)։

Յօդուած 19. — Թեմական հովիւներու դէմ Լսած ՝ և է բողոք կը ղրկուի իրենց Կեդրոնի Հոգաբարձութեան. եթէ խնդիրը ծանր երևոյթ մը ունենայ, նոյն մարմնոյ կողմէն գրաւորապէս կը հաղորդուի Առաջնորդին։ Եթէ Առաջնորդը Կեդրոնի Հոգաբարձութեամբ կամ Թեմական Ժողովով չկրնայ կարգադրել խնդիրը, Կեդր. Վարչութեան կը ներկայացնէ, և հոն վերաքննուելով խնդիրը՝ վերջնական վճիռը կը տրուի։

Յօդուած 20. — Երբ թեմ մը հովիւ չունենայ, կը կատարուի առժամանակեայ Եկեղեցականով մը՝ որ կը ղրկուի Առաջնորդարանէն՝ Կեդրոնի Հոգաբարձութեան գիտութեամբ և հաւանութեամբ՝ մինչև նոր հովուի մը ընտրութիւնը։

Յօդուած 21. — Թեմական հովիւները իրենց հրաժարականը կը ներկայացուցնեն իրենց թեմի Թեմական Ժողովին և մէկ օրինակն ալ Առաջնորդին. Թեմական Ժողովը Առաջնորդի գիտութեամբ և հաւանութեամբ կ՝ընդունի կամ կը մերժէ զայն։

Յօդուած 22. — Ա՛ռ առաւելն մէկ տարուան ժամանակամիջոցի մէջ, Առաջնորդը կամ Տեղապահը կամ Առաջնորդարանի կողմէ ղրկուած եկեղեցական Ներկայացուցիչը՝ կը հրաւիրէ Թեմական Ժողով նոյն թեմի կեդրոնին մէջ։ Թեմական Ժողովը կը պարտաւորուի եկեղեցականաց կամ ընծայացուներու ցանկ մը, որ կը հաղորդուի թեմին բոլոր Հոգաբարձութեանց. այս վերջինները՝ իրենց տեղի Հայ. Եկեղ. դաւակները գումարելով՝ գաղտնի քուէարկութիւն կատարել կուտան այդ ցանկին վրայ, և արդիւնքը անմիջապէս կը հաղորդեն Թեմական Ժողովի Դիւանին, որ՝ քուէները գումարելով և բաղդատելով՝ առաւելագոյն քուէ ստացողը կը հռչակէ Թեմական հովիւ, որը՝ Առաջնորդի վաւերացումէն յետոյ՝ կ՝անցնի իւր պաշտօնի գլուխը։

Յօդուած 23. — Ընծայացումը Կեդր. Կրօնական Ժողովոյ որոշմամբ և վկայականով միայն ընտրելի կը ներկայանայ։ Եթէ

Թեմական Ժողով մը՝ ընծայացուի մը մերժման մասին՝ Կրօնական Ժողովի առարկութիւնները գոհացուցիչ չգտնէ՝ կը դիմէ Երեսփոխանական Ժողովին։

Յօդուած 24. — Եկեղեցական մը, որ թեմի մը Ժողովրդէն հովիւ ընտրուած է, չի կրնար ուրիշ թեմի մը համար ընտրելի ըլլալ՝ առանց զոնէ մէկ տարեշրջան պաշտօնավարած լինելու։

ԳԼՈՒԽ Դ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Յօդուած 25. — Երեսփոխանական Ժողովը Ամերիկայի մէջ գտնուած Հայ. Եկեղեցւոյ Ժողովրդեան ներկայացուցիչ մարմինն է, որ կը կազմուի առաջնորդական և հովուական թեմերու կողմանէ ընտրուած Երեսփոխաններէ և պաշտօնավարող եկեղեցականներէ։

Յօդուած 26. — Երեսփոխաններն կ՝ընտրուին բոլոր թեմերու մէջ գտնուած քուէատուներու հարիւրին մէկ համեմատութեամբ։

Յօդուած 27. — Հովուական թեմերու Երեսփոխանները կ՝ընտրուին Թեմական Ժողովներէն. իսկ Առաջնորդական թեմերու Երեսփոխաններ ընտրելու համար՝ Առաջնորդը կամ իւր Ներկայացուցիչ եկեղեցականը, մօտակայ տեղերու Հոգաբարձութեանց Դիւանները և Գործակալները կը գումարէ իրենց կեդրոն բազմահայ քաղաքին մէջ, և տեղւոյն Հոգաբարձութեան հետ ժողով կազմելով կ՝ընտրէ այդ շրջանակի թուոյն համեմատութեամբ քանի Երեսփոխան որ պէտք է։

Յօդուած 28. — Երեսփոխանները կրնան ընտրուիլ կամ ընտրող ժողովոց անդամներէն և կամ դուրսէն, բաւական է որ Հայ. Եկեղ. անձնահամարի Տոմարին մէջ արձանագրուած լինի ընտրելն. բա այսմ՝ հեռաւոր տեղ՝երը կրնան Երեսփոխան նշանակել այնպիսիները՝ որոնք դիւրութիւն ունին ներկայ գտնուելու Ժողովին։

Յօդուած 29. — Երեսփոխանական Ժողովներուն կը նախագահէ Ամերիկայի Հայոց Առաջնորդը, կամ Տեղապահը, բայց երբ խնդիրը Նախագահի անձին կամ պաշտօնավարութեանը մասին լինի՝ այն ատեն Թեմական հովուաց երիցագոյնը կը նախագահէ։

Յօդուած 30. — Երեսփոխանական Ժողովի պաշտօնն է կատա-

րել Առաջնորդի ընտրութիւնը, կամ որոշել նորա պաշտօնէ հեռացումը, սահմանել նորա տարեկան ռոճկի քանակը, գաղտնի քուէից առաւելութեամբ ընտրել Տնտեսական ժողովը իւր անդամներէն կամ դուրսէն. այս սահմանադրութիւնը ի հարկին վերաքննել, անօրինել այն խնդիրները՝ որք կը վերաբերին Առաջնորդական ընդհանուր վիճակին, և որոց կարգադրութիւնը կ՚առաջարկուի կամ Առաջնորդէն, կամ Կեդր. Վարչութենէն և կամ Թեմական ժողովներէն, ի նկատի առնելով Կեդր. Վարչութեան պաշտօնավարութեան շրջանի տեղեկագիրը՝ առարկելի կամ անօրինելի խնդրոց մասին իւր որոշումները կ՚արձանագրէ։

Յօդուած 31. — Երեսփոխանական ժողովոյ Դիւանը իւր մէջէն կ՚ընտրուի իւրաքանչիւր գումարման համար։

Յօդուած 32. — Երեսփոխանաց պաշտօնը կը տևէ՝ ցորչափ իրենց ներկայացուած խնդիրներու կարգադրութիւնը չէ աւարտած. բայց չորս տարին մի անգամ անհրաժեշտ է Երեսփոխանական ընտրութիւնը և գումարումը՝ Վարչութեան համարատուութիւնը լսելու և նոր Տնտեսական ժողով ընտրելու համար։

Յօդուած 33. — Երեսփոխանական ժողովը կը գումարուի հրաւիրմամբ Կեդր. Վարչութեան. նաև Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է հրաւիրել Երեսփոխանական ժողով՝ երբ Հոգևոր թեմերու մեծամասնութիւնը պահանջէ։

ԳԼՈՒԽ Ե

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդուած 34. — Ամերիկայի Առաջնորդութիւնը կունենայ կեդրոնական վարչութիւն մը։ Կեդր. Վարչութիւն կը կոչուի այն խառն ժողովը՝ որ կը բաղկանայ Կրօնական և Տնտեսական ժողովներէ։

Յօդուած 35. — Կեդր. Վարչութեան Կրօնական ժողովը կը կազմուի Ամերիկայի մէջ պաշտօնավարող եկեղեցականներէ։

Յօդուած 36. — Կրօնական ժողովի պաշտօնն է, գումարուելով նախագահութեամբ Առաջնորդին, կարգադրել վիճակին բոլոր կրօնական ընդհանուր և առկախ խնդիրները։

Յօդուած 37. — Կրօնական ժողովը կունենայ իւր Ճայլուն Դիւանը։

Յօդուած 38. — Կեդր. Վարչութեան Տնտեսական ժողովը կ՚ընտրուի Երեսփոխանական ժողովէն՝ Կրօնական ժողովի անդամոց թուոյն համեմատութեամբ աշխարհականներէ. իւր պաշտօնը չորս տարի կը տևէ և վերընտրելի է։

Յօդուած 39. — Տնտեսական ժողովի պաշտօնն է՝ գումարուելով նախագահութեամբ Առաջնորդին, վիճակային բոլոր նիւթական մատակարարութեան գործերը անօրինել. ինչպէս նաև կարգադրել Առաջնորդական թեմ կազմող վայրերու գործերը, իրեւ անոնց թեմական ժողովը։

Յօդուած 40. — Տնտեսական ժողովը կունենայ իւր Ճայլուն Դիւանը։

Յօդուած 41. — Երբ Տնտեսական ժողովի պաշտօնավարութեան շրջանի մէջ՝ անդամներէն հրաժարողներ լինին, անոնց պակասը կը լրացուի ընտրութեան ցանկին մէջ գտնուող առաւելագոյն քուէ ստացողներէն. իսկ երբ իւր մեծամասնութիւնը կորսնցնէ կամ խմբովին հրաժարի, Երեսփոխանական ժողով գումարելով նոր ընտրութիւն կը կատարուի։

Յօդուած 42. — Կեդր. Վարչութեան պաշտօնն է, գումարուելով նախագահութեամբ Առաջնորդին, անօրինել այն ամէն խնդիրները, զորս Տնտեսական և Կրօնական ժողովներու կողմանէ կարելի չէ եղած կարգադրել առանձնապէս, և կամ կրօնական ու տնտեսական կրկին հանգամանք ունին. կազմել Երեսփոխանական ժողովի օրակարգը. ընդունել Թեմական հովիւներու և ժողովներու տարեկան տեղեկագրերը. քննելով վաւերացնել զայնս՝ և յանձնել Առաջնորդարանի դիւանատան, բանակցելով Թեմական ժողովներու հետ՝ Երեսփոխանական ժողովի կողմէ Առաջնորդարանի համար որոշուած տարէվճարի բաշխումը կատարել Հոգևոր և Առաջնորդական թեմերու վրայ. գործադրել Երեսփոխանական ժողովի որոշումները. առաստացնել Առաջնորդարանի կեդրոնական մնուցիկի հասոյթից ազբիւրները. կարգել յատուկ Դիւանագիր մը՝ Առաջնորդարանի դիւանատան գործոց համար. նախագահութեամբ երիցագոյն եկեղեցականին՝ ընտրել ի հարկին Առաջնորդական տեղապահ մը, նախաքննել Առաջնորդին դէմ եղած գանգատները և արդիւնքը ներկայացնել Երեսփոխանական ժողովին։

Յօդուած 43. — Կեդր. Վարչութեան Դիւանը կը կազմուի Կրօնական ժողովի Ատենապետէն և Տնտեսական ժողովի Ատենադպրէն, կունենայ իւր Գանձապետը որ կ՚ընտրուի Տնտեսական ժողովի անդամներէն, և որ կը պահէ Առաջնորդարանի հասոյթները՝ Կեդր. Վարչութեան որոշմանց համեմատ ծախքերը ընելու համար։

Յօդուած 44. — Կեդր. Վարչութեան նիստերը օրինաւոր կը համարուին այն ատեն՝ երբ Կրօնական և Տնտեսական ժողովները իրենք իրենց մէջ մեծամասնութիւն կը կազմեն։

Յօդուած 45. — Կեդր. Վարչութեան ո՛ և է անդամ եթէ բանաւոր պատճառաւ բացակայ գտնուի գումարումներէն, կրնայ գրաւորապէս օրակարգի խնդրոյ վրայ իւր կարծիքը՝ ձայնն ու քուէն տալ իւր պաշտօնակիցներէն մէկուն՝ որ ներկայ կը լինի։

Յօդուած 46. — Եթէ Կեդր. Վարչութեան ժողովոց միջև կամ Առաջնորդի հետ անհամաձայնութիւն ծագի խնդրոյ մը համար, Առաջնորդի կամ ժողովոց կողմանէ Երեսփոխանական ժողովին կը ներկայացուի ի անօրէնութիւն։

Յօդուած 47. — Կեդր. Վարչութիւնը, յընթացս իւր պաշտօնավարութեան, գործնական միջոցներ պէտք է խորհի և գործադրէ՝ Ամերիկայի ամէն կողմ ցրուած Հայ մանուկներու և երիտասարդներու կրօնական և ազգային կրթութեան համար։

Յօդուած 48. — Կեդր. Վարչութեան ժողովները վեց ամիսը անգամ մը կանոնաւոր գումարումներ պէտք է ունենան՝ հրաւիրմամբ Առաջնորդին. իսկ բացառիկ պարագայից մէջ՝ արտաքոյ կարգի գումարումներ ալ կունենան՝ երբ սովորական պէտք լինի։ Այս բացառիկ գումարումները կրնան լինել հրաւիրմամբ Առաջնորդին կամ ժողովներէ միոյն Դիւանին։

Յօդուած 49. — Կեդր. Վարչութեան պարտաւորութիւնն է տարին անգամ մը՝ կատարուած բոլոր գործառնութեանց տեղեկագիրը պատրաստել և յանձնել Առաջնորդին՝ Ամենայն Հայոց Հայրապետին զրկուելու համար. իսկ չորս տարին մի անգամ քառամեայ տեղեկագիրը և ընդհանուր վիճակի քառամեայ ելևմտական հաշուեցոյցը պատրաստելով մի օրինակը յանձնել Երեսփոխանական ժողովի նկատառութեան և մէկ օրինակն ալ զրկել նորին Ս. Օծութեան։

ԳԼՈՒԽ Զ

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդուած 50. — Հովուական թեմերու ընդհանուր գործերը կը կատարուին Թեմական ժողովներով։

Յօդուած 51. — Թեմական ժողովը կը բաղկանայ կեդրոնի

Հոգաբարձութենէն, շրջակայից Հոգաբարձութեանց Դիւաններէն, կամ երկերկու ներկայացուցիչներէն և գործակալներէն։

Յօդուած 52. — Թեմական ժողովը կը կառավարուի կեդրոնի Հոգաբարձութեան Դիւանէն։

Յօդուած 53. — Թեմական ժողովի պաշտօնն է կարգադրել Թեմական Հովուի ընտրութիւնը՝ Սահմանադրութեանս 22րդ Յօդուածի տրամադրութեան համեմատ. պատրաստել կանոնագիր մը թեմին եկեղեցական գործոց կառավարութեան համար, և զրկելով զայն թեմին Հոգաբարձութեանց և Գործակալաց՝ ստանալ ժողովրդեան դիտողութիւնները, և ապա վերջնապէս սրբագրելով և վաւերացնելով՝ զրկել զայն Առաջնորդին ի հաստատութիւն. պատրաստել թեմին տարեկան ելևմտացոյցը. նաև կարգադրել այն ամէն խնդիրները, որք կը վերաբերին ընդհանուր թեմին։

Յօդուած 54. — Թեմական ժողովը կը հրաւիրէ Հովիւը և կը նախագահէ անոր, բացի այն պարագաներէն երբ նկատի առնուելիք խնդիրը հովուի անձին կամ պաշտօնավարութեան մասին լինի. այն ատեն՝ պէտք է Առաջնորդը կամ իւր ներկայացուցիչը հրաւիրէ և նախագահէ։

Յօդուած 55. — Բացի բացառիկ պարագաներէ, Թեմական ժողովը տարին մի անգամ նիստ կունենայ, յորում ի նկատի կ'առնու նախորդ տարւոյ հաշուէկշիռը և յաջորդ տարւոյ ելևմտացոյցը կը պատրաստէ։

ԳԼՈՒԽ Է

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Յօդուած 56. — Ամերիկայի մէջ գտնուող իւրաքանչիւր հայաբնակ վայր՝ տեղւոյն Եկեղեցւոյ քուէատու անդամոց գաղտնի քուէից առաւելութեամբ՝ կ'ընտրէ իւր Հոգաբարձութիւնը։ Սահմանադրութեանս մէջ յատուկ գլուխ մը կը կազմէ Ընտրական հրահանգը, որոյ համեմատ պիտի ընտրուին Հոգաբարձութիւնները, դրութիւն մը՝ որոյ սկզբունքները կրնան գործադրուիլ նաև Հովուական և ուրիշ ամէն քուէարկութեանց մէջ՝ յարմարցուելով այդ ընտրութեանց պարագաներուն։

Հայկական Գրադարան
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
Ա. Մաշտոցի անվան

Յօդուած 57. — Իւրաքանչիւր հայաբնակ վայրի համար, Գործակալներու և Հոգաբարձութեանց ընտրութեան մասին՝ ընտրելիներու թուոյ սահմանը՝ պէտք է գծուի թեմական կանոնագրերու մէջ։

Յօդուած 58. — Հովուական թեմերու Հոգաբարձութեանց ընտրութիւնը կը վաւերացուի իրենց Թեմական Հովիւներէն և կը տեղեկագրուի Առաջնորդին ի գիտութիւն. իսկ Առաջնորդական թեմերու ընտրութիւնը կը վաւերացուի Առաջնորդէն։

Յօդուած 59. — Իւրաքանչիւր թեմի կեդրոնի Հոգաբարձութեան պաշտօնն է՝ պարբերաբար գումարուելով նախագահութեամբ հովուին,

Ա. Հոգ տանել ամեն կիւրակի եկեղեցական պաշտամանց անխափան կատարման։

Բ. Յատուկ զգաց դաս կազմելով՝ հսկել երգեցողութեանց կանոնաւորութեան և ներդաշնակութեան։

Գ. Հոգ տանել Եկեղեցական տրոց գանձման։

Դ. Ջանալով կարգադրել ժողովրդեան մէջ պատահած վէճերը հաշտարարութեամբ։

Ե. Ըստ կարելոյն մխիթարել աղքատները և կարօտեալները՝ կազմելով մարմին մը՝ որ աշխատի հայթայթել օժանդակութեան միջոցներ կարօտելոց համար։

Զ. Մատակարարել Եկեղեցւոյ նիւթական պէտքերը և Թեմական ժողովի կազմած տարեկան եւմատացոյցին համեմատ՝ վճարել Առաջնորդարանի, Թեմական հովուի և ուրիշ Եկեղեցական պաշտօնէից թոշակները։

Է. Ջանալ Եկեղեցւոյ գանձին վիճակը բարւոքել։

Ը. Մայրենի լեզուի զարգացման փոյթ տանել և քաջալերել այդ նպատակին ծառայող ձեռնարկները։

Յօդուած 60. — Հովուական թեմ կազմող շրջակայ վայրերու և Առաջնորդական թեմի բոլոր Հոգաբարձութեանց պաշտօնը համաձայն է 59րդ Յօդուածի ընդհանուր կէտերուն, ասնք նաև՝ մասնաւորապէս՝ ամէն ջանք ի գործ պէտք է դնեն տեղական ժողովրդեան մէջ վառ պահելու Մայր Եկեղեցւոյ և Ազգայնութեան սէրը։ Ի դէպս պիտոյից Ս. Խորհրդոց մատակարարութեան՝ դիմել Կեդրոնի Հոգաբարձութեան կամ հովուին և կամ Առաջնորդին (եթէ Առաջնորդական թեմ է). գանձել եկեղեցական տուրքերը և գործածել՝ ըստ հրահանգի թեմական Կանոնագրին։

Յօդուած. 61. — Հոգաբարձութիւնք իրենց մէջէն կ՚ընտրեն իրենց Դիւանը և այլ պաշտօնեաները, իրենց պաշտօնի տեւողութիւնը կ՚որոշուի իրենց թեմական Կանոնագրով։ Երբ Հոգաբարձութեանց և Գործակալաց պաշտօնավարութեան շրջանը աւարտի, պարտաւոր են իրենց տեղեկագիրը և հաշիւը մատուցանել տեղական ժողովրդեան և մէկ օրինակն ալ հասցունել իրենց թեմական ժողովին Դիւանին։

Յօդուած. 62. — Այն վայրերը՝ ուր հայ. Եկեղեցւոյ դաւակներ նուազ թիւ մը կը կազմեն, Առաջնորդը (եթէ Առաջնորդական թեմ է) կամ հովիւը՝ տեղին ժողովրդին ընտրել կուտայ Գործակալ մը՝ որ իւր տեղին վրայ նոյն պարտքերն ունի՝ ինչ որ շրջակայից Հոգաբարձութիւնները։ Իսկ եթէ տեղի մը ժողովուրդը իւր այդ ընտրական իրաւունքը չ՚գործադրէ՝ Առաջնորդը կամ Հովիւը ինքը անոնց մէջէն կը նշանակէ մէկը և կը ծանուցանէ տեղին ժողովրդեան։

Յօդուած. 63. — Ինչպէս Հոգաբարձութիւնք՝ նոյնպէս և բոլոր Եկեղեցական պաշտօնէութիւնք, իրենց պաշտօնավարութեան շրջանը աւարտելէն վերջն ալ պարտին շարունակել պաշտօնին՝ մինչև նոր ընտրութիւն յաջորդին, որուն պարտաւոր են յանձնել իրենց հաշիւները և իրենց քով գտնուած ամեն եկեղեցապատկան գոյք։

Յօդուած 64. — Երբ Հոգաբարձութիւն մը իւր մեծամասնութիւնը կորսնցնէ՝ նոր Հոգաբարձութեան ընտրութիւն կը կատարուի՝ նախորդին շրջանը լրացունելու համար։ Իսկ եթէ մէկ կամ աւելի անդամներ պակսին՝ անոնց տեղ՝ Ընտրութեան ցանկէն՝ առաւելագոյն քուէ ստացողները կը հրաւիրուին յանդամակցութիւն։

Յօդուած 65. — Եթէ յաջորդաբար երկու անգամ քուէարկութեամբ ընտրուած Հոգաբարձութիւններն հրաժարին՝ կամ տեղական երկպառակութեանց պատճառաւ օրինաւոր քուէարկութեամբ Հոգաբարձութիւն ընտրել հնար չը լինի, այն ատեն Թեմական հովիւը՝ Առաջնորդին հետ բանակցելով՝ առժամեայ Հոգաբարձութիւն մը կը նշանակէ, որոյ պաշտօնը վեց ամիսէն մինչև մէկ տարի միայն կը տեւէ։

Յօդուած 66. — Հովուական Թեմօրէից մէջ գտնուած հոգաբարձութեանց դէմ եղած գանգատները կը ղրկուին Թեմական հովուին, իսկ Առաջնորդական թեմ եղած տեղերու Հոգաբարձութեանց նկատմամբ եղած գանգատները կը ղրկուին Առաջնորդին, որք կը տնօրինեն զարժանն՝ ըստ տրամադրելոյ իրենց թեմական Կանոնագրին։

Յօդուած 67. — Թեմական հովուաց և Հոգաբարձութեանց միջև տեղի ունեցած անհամաձայնութեանց համար հարկ է դիմել Առաջնորդին ըստ տրամադրելոյ Սահմանադրութեան։

ԳԼՈՒԽ Ը.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍՈՑԹ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Յօդուած 68. — Ամերիկայի մէջ գտնուող ամեն հայ, որ պաւակ է և կ'արձանագրուի զաւակ Հայաստանեայց Եկեղեցւոյ, իրաւունք ունի վայելելու եկեղեցւոյ հոգածութիւնը և կրօնական մխիթարութիւնը։ Սակայն եկեղեցւոյ նիւթական պէտքերը գոհացնելու համար՝ ամեն Եկեղեցւոյ զաւակ՝ որ դրամ կը վաստակի՝ պարտաւոր է տարեկան տուրք մը նշանակել և վճարել եկեղեցւոյ ենտուկին՝ իւր բնակավայրի Հոգաբարձութեան կամ Գործակալի միջոցաւ։ Անոնք որ կարող են և չեն ուզեր վճարել իրենց այդ պարտքը՝ ձայն և քուէ չունին եկեղեցւոյ ընտրական գործոց և ժողովոց մէջ. և նոյն իսկ պահանջելու իրաւունք չունին Եկեղեցւոյ պաշտօնէից հոգածութիւնը և ծառայութիւնը։

Յօդուած. 69. — Այս Սահմանադրութեան Հայ. Եկեղեցւոյ զաւակաց տուած ամեն իրաւունք կը վայելեն նաև անոնք՝ որոնց նիւթական անկարողութիւնը կը հաստատուի, և որոնք Եկեղեցական տուրք տալէ ազատ կը մնան։

Յօդուած 70. — Եկեղեցւոյ տարեկան տուրքը առնուազն (2) երկու տալեր է. բայց թեմերը իրենց տեղական պահանջին և ժողովրդեան կարողութեան համեմատութեամբ կը կարգադրեն իրենց թեմին տրոց քանակը։

Յօդուած 71. — Ամեն տարեշրջանի մինչև կէսը՝ նոյն տարուան Եկեղեցական տուրքերը պէտք է գանձուին վերջնական, Եկեղեցական պիտոյից մատակարարութեան գործը չդժուարացնելու համար։

Յօդուած 72. — Եկեղեցւոյ տարեկան տուրքէն զատ՝ Թեմերու այլ եկամուտներն են՝ պակի և մկրտութեան տոթիւ գանձելի տուրքերը (որոց քանակը թեմական Կանոնագրով կը սահմանուի). նաև իւղագնէ՝ Եկեղեցւոյ պնակներէ՝ նուէրներէ և պատահական հանգանակութիւններէ գոյացած հասոյթները։

Յօդուած 73. — Այս ամեն հասոյթները Հոգաբարձութեանց և Գործակալաց ձեռամբ կը գանձուին աջակցութեամբ իրենց թեմական հովուին. և կը մատակարարուին ըստ թեմական Կանոնագրին և թեմական ժողովներէն պատրաստուած տարեկան ելևմտացոյցին։

Յօդուած 74. — Առաջնորդարանի եկամուտներն են.

Ա. Հովուական թեմերէն վճարուելիք Առաջնորդական տուրքը.

Բ. Առաջնորդական թեմ նկատուած վայրերու Եկեղեցական տարեկան և պատահական տուրքերը.

Գ. Ընդհանուր վիճակին մէջ կատարուած մկրտութեանց և մուտնութեանց վկայագրոց և Առաջնորդարանի վաւերացման ներկայացուած պաշտօնագրին և վկայագրոց փոխարէն գանձուած տուրքերը։

Յօդուած 75. — Նոյն Առաջնորդական հասոյթները կը գանձուին և կը մատակարարուին գիտութեամբ և անօրէնութեամբ Կեդրոնական Վարչութեան և նորա կազմած ելևմտացոյցին համաձայն։

Յօդուած 76. — Առաջնորդարանի ծախքերն են. Առաջնորդին, այցելու հովուին և Դիւանադպրի վճարուելիք տարեթոշակները և Առաջնորդարանի շէնքին և Դիւանատան կարեւոր ծախքերը։

ԳԼՈՒԽ Թ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Յօդուած 77. — Ըստ Յօդ. 68 և 69 ի որ և է պաշտօնէութեան ընտրութեանց մէջ ընտրող և ընտրելի լինելու իրաւունքն ունին անոնք, որք եկեղեցւոյ Տումարին մէջ արձանագրուած և տարեկան տուրքերնին վճարած կամ անկարող նկատուած են. իսկ ընտրելի լինելու համար, վերոյիշեալ պարագաներէն զատ՝ կը պահանջուի որ գոնէ քսան և մէկ տարին բոլորած և օրինակելի վարուց տէր անձեր լինին։

Յօդուած 78. — Մէկ քաղաքէն ուրիշ քաղաք փոխադրուող ազգայինք ալ կրնան ընտրող և ընտրելի լինել իրենց նոր բնակավայրին մէջ՝ եթէ նոյն տարուան եկեղեցական տուրքը վճարած ըլլալուն ընկալագիրը կամ վկայագիրը ունենան ի ձեռին՝ իրենց նախորդ բնավայրի Հոգաբարձութենէն կամ Գործակալէն։

Յօդուած 79. — Հոգաբարձութիւն մը՝ իւր պաշտօնավարութեան շրջանը աւարտելէն առ նուազն եօթն օր առաջ՝ կը կազմէ Ընտրողական ժողով՝ ըստ թեմական Կանոնագրի՝ ինքը ընտրելով կամ ժողովուրդը։

Յօդուած 80. — Ընտրողական ժողովը կը գումարուի նախագահութեամբ հովուին կամ Առաջնորդի ներկայացուցչին և եռապատիկ ցանկ մը կը կազմէ տեղւոյն անձնահամարի տումարէն քաղելով յարմար ընտրելիները։ Այս ցանկը կը ղրկուի ամէն ընտրողի՝ որոշելով ընտրութեան օրը, տեղն ու ժամանակը։

Յօդուած 81. — Ընտրութեան օրը Ընտրողական ժողովը՝ նախագահութեամբ հովուին կամ ներկայացուցչին՝ կը հսկէ քուէարկութեան և քուէհամարին։ Անձնահամարի Տումարէն մի առ մի կը կարդացուի ընտրողներու անունները, և ընտրողք անձամբ կուգան իրենց քուէները ձգել քուէատուփին մէջ։

Յօդուած 82. — Ով որ բանաւոր պատճառաւ անձամբ չկրնար իւր քուէն բերել, իւր ստորագրութեամբ նամակ մը կ'ուղղէ Նախագահին և կը ներփակէ իւր քուէն, երբ այդ բացակային անունը կարդացուի՝ ստորագրութեան ճշգրտութիւնը հաստատուելէն վերջ անոր քուէն քուէատուփին մէջ կը ձգուի։

Յօդուած 83. — Ընտրելեաց ցանկը լոկ դիւրութեան համար կը պատրաստուի. հետևարար ընտրողները կրնան անկէ դուրս եղած անձանց ալ քուէ տալ, պայմանաւոր ընտրելի լինելու համար՝ անոնք ունենան։ Քուէներն պէտք է գրուին որոշ, ընտրեալին անունը, մականունը և ծննդավայրը։ Հոգաբարձութեան թիւէն աւելի գրուած անուններուն աւելորդ վերջիններն չեն կարդացուիր։

Յօդուած 84. — Ով որ գրել չի գիտեր, կրնայ նախագահին յայտնել գաղտնապէս իւր կամքը և նա գրելով անոր քուէն՝ կը ձգէ քուէատուփին մէջ։

Յօդուած 85. — Ճիշտ որոշեալ ժամուն քուէհամարը կ'սկսի և անկից վերջ եկած քուէները չեն ընդունուիր։

Յօդուած 86. — Ընտրութեան համար որոշուած օրը՝ երբ անձնահամարի Տումարին մէջ նշանակուած ընտրողներու գոնէ մէկ չորրորդ ($^1/_4$) մասը ներկայ չէ, ընտրութիւնը կը յետաձգուի. իսկ երկրորդ հրաւէրին ներկայ եղողներուն թիւը վաւերական կ'ընդունուի՝ առանց տարկութեան։

Յօդուած 87. — Քուէհամարը սկսելէ առաջ, ընտրողներու բերանացի կամքը կ'առնուի ընտրութեան բացարձակ կամ համեմատական ըլլալուն նկատմամբ. եթէ ընտրողք որոշեն որ բացարձակ լինի, յայնժամ ներկայ ընտրողներու թիւին կէսէն մէկ աւելի քուէ ստացողը միայն ընտրեալ կը հռչակուի. իսկ մեծամասնութիւնէն երկպատիկ փակեալ ցանկ մը կազմելով՝ նոյն օրը կամ ուրիշ օր մը երկրորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ ասոնց վրայ, և առաւելագոյն քուէ ստացողները ընտրեալ կ'ըլլան։ Իսկ եթէ ներկայ ընտրողք որոշեն որ՝ համեմատական լինի, յայնժամ առաջին քուէհամարի արդիւնքով առաւելագոյն քուէ ստացողները ընտրեալ կը հռչակուին։

Յօդուած 88. — Քուէհամարը կը կատարուի հրապարակաւ և բարձրաձայն. քուէարկութեան արդիւնքը կ'ստորագրուի Նախագահէն և Ընտրողական ժողովի Դիւանէն և կը հաղորդուի՝ ուր որ անկէ՝ ի վաւերացումն։

Յօդուած 89. — Ընտրութենէն այս ձևը, կրնայ յարմարցուիլ ամէն ազգակ ժողովրդային ընտրութ անց, ընդարձակուելով կամ համառօտուելով. թեմական Կանոնագրերը կրնան աւելի մանրամասնել զայնս։

ԳԼՈՒԽ Ժ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդուած 90. — Սահմանադրութեանս վերաքննութեան իրաւունքը կը պատկանի Երեսփոխանական ժողովին, և փոփոխութիւնք Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն հաստատուելէն զկնի՝ գործադրելի են։

Ստորագրեալքս՝ Առաջնորդ, Թեմական հովիւք և լիազօր պատգամաւորք Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ ժողովրդեան ներկայացուցիչ մարմիններու՝ մեր 1902 Յունիս $^{21}/_4$ և Յուլիս $^{22}/_5$ ին, Ուսաբրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովասրահին մէջ գումարուած հինգ նստերով՝ քննեցինք և սրբագրեցինք կրօնական ժողովի 1901 Յունիս $^4/_{17}$ի և $^5/_{18}$ի պատրաստած 82 Յօդուածներէ բաղկացեալ Սահմանադրութիւնը և իւր ներկայ 90 Յօդուածներուն վերածեալ վիճակին մէջ՝ կը վաւերացնենք։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մասիսյանի անվան

<< Ազգային գրադարան
NL0173815

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱՆԴԱՄՈՑ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Յովսէփ Եպիսկոպոս Ամերիկայի, Նախագահ

Արսէն Վարդապետ Եր. Վահունի,	Հովիւ Փրովիտենսի
Մաշթոց Վարդապետ Փափազեանց,	Հովիւ Ռուսաստանի
Ղևոնդ Վարդապետ Մարգուկիսեան,	Հովիւ Նիւ-Եօրքի

Արշակունի Յովհաննէս Պատգամաւոր		Ցրեսնոյի և Ա. Ատենապետ
Յովհաննէս Կ. Հիւրմիւզ	»	Նիւ-Եօրքի և Բ. »
Արմենակ Շիշմանեան	»	Ռուսաստանի և Ա. Ատենադպիր
Կարապետ Գ. Մելիքոսեան	»	Փրովիտենսի և Բ. »
Արամ Շահմիրեան	»	Նիւ Պրիտէյնի և Գ. »
Գրիգոր Ամիունեան	»	Նիւ-Եօրքի
Միհրան Պապիկեան	»	Միլիքրատի
Գէորգ Տէր Մաղաքեան	»	Ռուսաստանի
Մկրտիչ Ս. Խաչատեանց	»	Հարրիսբրատի
Յարութիւն Տէր Ստեփանեան	»	Ֆիլատէլֆիայի
Աւետիս Պ. Սէլեան	»	Պոսթոնի
Դաւիթ Ա. Ղուկասեան	»	Պոսթոնի
Գէորգ Պ. Թովմասեանեան	»	Ցրեսնոյի
Միքայէլ Վարդանեան	»	Լորենսի
Տիգրան Պոյաճեան	»	Լորենսի
Երուանդ Մ. Աստուրեան	»	Թրոյի
Մարտիրոս Յ. Քէչէճեան	»	Փրովիտենսի
Գէորգ Վարդերեսեան	»	Պրայրընի
Օհան Խամկոչեան	»	Իսթ Որրը բաուզնի
Յարութիւն Պէրպէրեան	»	Քեմպրիճի

ԱՄԱՆԱՅՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
... OCESE OF THE
... ARMENIAN CHURCH
... the U. S. America.
98
ՄԻԱՑ. ՆԱՀ. ԱՄԵՐԻԿԱՅԻ